ՍՏԵՓԱՆՈՍ ՍԱԼՄԱՍՏԵՑՈՒ ՄԱՀՈՒԱՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Մեր «Դիտողութիւններ» յօդուածի կարեւոր կէտերից մէկն էր Ստեփանոս Սալմաստեցու մահուան թուականի հարցը։

Սալմաստեցու մահուան թուականը որոնելու հարցում, ինչպէս տեսել էինք, կարեւոր նշանակութիւն ունէին Առաքել Դաւրիժեցու հաղորդած տուեալները, որոնց համաձայն Սալմաստեցին դեռ կենդանի էր 1557 թուականին։ Դաւրիժեցու տուեալների արժանահաւատութիւնը Սալմաստեցու շրջանի կաթողիկոսների ժամանակագրական հարցերում՝ վեր է ամէն կասկածից, որովհետեւ դրանք հիմնուած են ձեռագրերի յիշատակարանների վրայ։ Նա իր «Պատմութեան» մէջ յիշատակուած այս կամ այն դէպքի թուականները նշելիս՝ կարող է, իր ձեռքի տակ եղած աղբիւրների վրայ յենուելով, սխալուել. բայց այստեղ՝ խնդիրն այլ է։ Ձեռագրերի յիշատակարանների վրայ յենուելիս՝ նա չէր կարող սխալուել, որովհետեւ յիշատակարաններում գտած տուեալներով նա ոչ թէ կաթողիկոսների իշխանութեան սկիզբն ու վերջն է նշում, այլ միայն յիշատակման թուականները։

Արեւելցոսը, որը շատ մօտիկ յարաբերութիւնների մէջ էր եղել Հռոմում Սալմաստեցու հետ, գրում է, որ նա 1550 թուականին մեկնելով այնտեղից, «գնաց կարոլոս Ե կայսեր մօտ՝ Լեհաստանի եւ Մոսկովիայի վրայով հայրենիք վերադառնալու համար[24]։ Բայց Արեւելցոսը տեղեկութիւն չունի, թէ ինչպիսի՛ ընթացք ունեցաւ այդ ուղեւորութիւնը։ Արեւելցոսի վկայութեանը հետեւելով՝ Հ. Մ. Զամչեանը կրկնում է, որ 1550 թուականին Սալմաստեցին Հռոմից անցաւ Գերմանիա՝ կարոլոս Ե կայսրին այցելելու, եւ նրա ուղեւորութիւնը հասցնում է մինչեւ հայրենիք. «Եւ ապա անցեալ ընդ Լեհաստան եւ ընդ Մոսկովստան՝ եկն ետաս ի յաջորդ ամի յաշխարհն Հայոց», այսինքն 1551 թուականին[25]։

Ըստ երեւոյթին Զամչեանը 1553 թուականը մի յիշատակարանի վրայ է յենուում իր այս լրացումը կատարելու համար, եթէ երբեք ուրիշ աղբիւր չունի։ Սալմաստեցու մասին նա գրում է, թէ «իբրեւ եմուտ էջմիածին, ընկալաւ զնա փառօք Միքայէլ կաթողիկոս [Սեբաստացի], եւ ետ նմա զառաջին պատիւ նորին եւ զնախագահութիւն. ուստի եւ ի յիշատակարանի միում գրեալ ի նոյն աւուրս ի թուին Հայոց ՌԲ, այն է յամի տեառն 1553, նա ինքն Ստեփաննոս յիշի իբրեւ կաթողիկոս Հայոց»[26]։

Այստեղ մեր խնդիրն այն չէ, թէ Ստեփանոս Սալմաստեցին էջմիածին վերադարձել էր կամ ոչ, այլ այն, թէ նա, ըստ մի յիշատակարանի, 1553 թուականին կենդանի էր եւ յիշատակուում էր որպէս հայոց կաթողիկոս։ Իբրեւ այդպիսին՝ նա յիշատակուում է նաեւ Դաւրիժեցու առաջ բերած ձեռագրական տուեալներով՝ մինչեւ 1557 թուականը, ինչպէս տեսանք արդէն։ Մենք դեռ ունենք նաեւ Յովհաննիսուկ Մշեցու վկայութիւնն այն մասին, որ Սալմաստեցին 1555 թուականին կենդանի էր եւ Լուովում առաջնորդ էր կարգել Գրիգոր Վարագեցուն։ Այս բոլորը ժխտուած են համարուում Պետրովիչի կողմից, թէեւ ժխտման փաստարկումները մեզ չեն համոզում։ Այնու ամենայնիւ, եթէ նոյնիսկ մի կողմ դնենք այս բոլորը՝ որպէս արտաքին կամ կողմնակի տուեալներ, որոնք, ըստ Պետրովիչի, կարող են արժէք չներկայացնել, մենք ունենք ներքին տուեալներ, որոնք Սալմաստեցու կենդանի լինելու ապացոյցն են տալիս 1550-ական թուականների ամբողջ ընթացքում եւ նոյնիսկ 60-ական թուականներին։

---

24 S.-E. Assemanus, p. 60.
25 Հ. Մ. Զամչեան, էջ 518։
26 Անդ, էջ 518-519։